ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը

Տարեկան զեկույց Հայաստան 2013

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2013թ.
Հրապարակվել է Հայաստանում (Ապրիլ, 2014թ.)
«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի կողմից

Ներածություն

Հայաստանն իրեն հռչակել է որպես ժողովրդավարական երկիր, որի հիմնական ուղենիշը լիբերալ արժեքների ինստիտուցիոնալականացումն ու իրացումն է, հետևաբար պետությունը և բոլոր շահագրգիռ կազմակերպություններն ու միությունները պետք է գործեն ՀՀ Սահմանադրության և գործող օրենքների շրջանակներում՝ ունենալու իրենց ներդրումը ժողովրդավարական արժեքները կրող հասարակության կերտման գործընթացում:

Հայաստանում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնությանն առնչվող խնդիրները հիմնականում դիտարկվում են միմիայն բացասական տեսանկյունից, ԼԳԲՏ[1] անձանց իրավունքների պաշտպանները ներկայացվում են որպես «ազգի դավաճաններ», իսկ ԼԳԲՏ անձիք՝ որպես հասարակության թշնամիներ: Արդյունքում, հասարակական կյանքի ցանկացած ոլորտ ԼԳԲՏ անձանց համար դառնում է խտրականության, անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի, բռնության կիրառման վայր: ԼԳԲՏ անձանց և նրանց աջակիցների նկատմամբ ճնշումները դիտարկվում են որպես նոր մարտահրավերներ, որոնք, սակայն, դեռևս ամբողջականորեն հակադարձված չեն: Պաշտոնատար անձանց կողմից արված հայտարարությունները միայն նպաստում են ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարմանը՝ ստեղծելով անպատժելիության մթնոլորտ:

Ստորագրած լինելով մի շարք հռչակագրեր և համաձայնագրեր՝ այնուամենայնիվ ՀՀ կառավարությունը չի փորձել անդրադառնալ ու լուծել գենդերի և սեռական կողմնորոշման հիմքով խտրականության հարցերը: Ավելին, վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ հասարակության մեջ նաև առկա խնդրո շուրջ գիտելիքների բացակայությունը և այս ամենի հետ կապված իրազեկվածությունը կաղում է: Արդյունքում, ԼԳԲՏ անձանց, ինչպես նաև նրանց խնդիրներով զբաղվող իրավապաշտպանների իրավունքները ոտնահարվում են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Սույն զեկույցը ամփոփում է 2013 թվականին ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարման հանրային հնչեղություն ունեցող դեպքերն ու միջոցառումները:

ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակի ընդհանուր նկարագիր

ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման դեպքերը 2013 թվականի ընթացքում շատ մտահոգիչ են: Խախտումները լայնածավալ են և ընդգրկում են հասարակական տարբեր ոլորտներ: Ընտանիքը, կրթական և առողջապահական հաստատությունները, ոստիկանությունն ու զինված ուժերը հիմնական ոլորտներն են, որտեղ խախտվում են ԼԳԲՏ անձանց հիմնարար իրավունքները[2]:

2013թ-ի ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերի փաստագրումը վկայում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ ֆիզիկական բռնության, վիրավորանքի, հետապնդման, սպառնալիքի, ահաբեկման, շանտաժի և ատելության կոչերի դեպքերի մասին:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերը հիմնականում հիմնված են ատելության հողի վրա՝ պայմանավորված անձի սեռական կողմնորոշմամբ և/

[1] ԼԳԲՏ - լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
[2] Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ, 2013թ. http://issuu.com/pinkarmenia/docs/lgbtmonitoringarm

կամ գենդերային ինքնությամբ: Բոլոր դեպքերում բռնության նախաձեռնող/հրահրող բռնարարները «հավատացած» են եղել, որ ԼԳԲՏ լինելը սխալ է. բռնություններն ուղեկցվել են տարբեր ձևերով՝ ներառյալ ծեծ, մարմնական վնասվածքի պատճառում, զենքի գործադրում, բռնության կիրառման սպառնալիք, շանտաժ, հետապնդում և այլն:

Վերոնշյալ դեպքերով պայմանավորված՝ ԼԳԲՏ անձինք ավելի հաճախ են ստիպված եղել առնչվել ՀՀ ոստիկանության և դատախազության մարմինների հետ, ինչն իր հերթին հանգեցրել և շարունակաբար հանգեցնում է վերջիններիս կողմից լիազորությունների չարաշահման և ԼԳԲՏ անձանց նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի: Մի շարք դեպքերում ոստիկանության աշխատակիցները ցուցաբերել են անհարգալից վերաբերմունք և ծաղրել են ԼԳԲՏ անձանց՝ թե՛ վերջիններիս տվյալ դեպքի զոհ լինելու, թե՛ ոստիկանության կողմից անազատության մեջ պահվելու դեպքերում[3]:

Կարևոր է նշել, որ ՀՀ ոստիկանության և դատախազության մարմինների կողմից նկատվում է ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումներին առնչվող գործերի քննությունից խուսափելու միտում: Սա բացառապես վերաբերվում է այն դեպքերին, երբ շոշափվում է ԼԳԲՏ անձանց այս կամ այն իրավունքի խախտման հանգամանքը: Դեռ ավելին, այն դեպքերում, երբ ԼԳԲՏ անձը դիմում է ոստիկանություն իր այս կամ այն իրավունքի խախտման առիթով, ոստիկանության և դատախազության մարմինների կողմից կա միտում հայտարարելու տվյալ գործով փաստերի անբավարարության մասին, ինչի արդյունքում քրեական գործը շրջվում է հենց դեպքով բողոք ներկայացրած ԼԳԲՏ անձանց դեմ՝ որպես ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածով նախատեսված հանցագործության մասին սուտ մատնություն[4]:

Մարդու իրավունքների այլ խախտումները, որոնք լայնատարած են եղել ողջ տարվա ընթացքում, ներառում են վիրավորանք և սպառնալիք պարունակող խոսքը՝ հիմնականում անհատների կողմից: Մարդու իրավունքների այս խախտումները ներառում են այնպիսի կոչեր, որոնք նպատակ են ունեցել ահաբեկել կամ սպառնալ թիրախ հանդիսացող անձանց և ստեղծել վախի մթնոլորտ վերջիններիս նկատմամբ: Եղել են դեպքեր, երբ անձին հետևել և սպառնացել են, որ իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվությունը կտարածեն նրա ընտանիքի և ընկերների շրջապատում և այլուր: Նման դեպքերը գրեթե երբեք չեն քննվում երկու հիմնական պատճառներով՝ առաջինը, որ դեպքի զոհը չի ցանկանում իր կողմնորոշման կամ ինքնության վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվի, և երկրորդը, որ նման դեպքերով մեղավորներին գտնելը հաճախ շատ բարդ է՝ մասնավորապես հաշվի առնելով այն փաստը, որ վերջիններս զոհին անծանոթ մարդիկ են լինում:

---

[3] Դեպքերը գրանցվել են «Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության համար» ծրագրի շրջանակներում http://www.hrarmenia.info

[4] Հոդված 333, ՀՀ քրեական օրենսգիրք, հասանելի է՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349

Ընտրություններ

Իշխանությունների կողմից ԼԳԲՏ հարցերի մանիպուլյացիան այն եզակի մեխանիզմներից է, որոնց օգնությամբ իշխանությունները կարողանում են մոբիլիզացնել հասարակությանը որոշակի նատակների շուրջ, ինչը տվյալ պարագայում կիրառվում է որպես ապահով պետություն ստեղծելու նախապայման: Ավելին, փորձը ցույց է տալիս, որ սովորաբար հետընտրական Հայաստանում ԼԳԲՏ հարցերը մշտապես բերվում են քննարկվող թեմաների օրակարգ: Այս տեսանկյունից ՀՀ Նախագահի և Երևանի ավագանու ընտրությունները բացառություններ չէին:

ՀՀ Նախագահական ընտրություններ 2013

ՀՀ-ում նախագահական ընտրությունները տեղի ունեցան 2013թ-ի փետրվարի 18-ին: Ընտրություններում հաղթանակ տարավ գործող նախագահ Սերժ Սարգսյանը, ով ստացել էր ընդհանուր ձայների 59%-ը: Ռաֆֆի Հովհաննիսյանը երկրորդն էր՝ ընդհանուր ձայների 37%-ով: Ընտրություններին հաջորդած օրերին մասսայական բողոքի ակցիաներ տեղի ունեցան ինչպես Երևանում (հիմնականում Ազատության հրապարակում), այնպես էլ Հայաստանի այլ քաղաքներում՝ պնդելով, որ ընտրությունների արդյունքները ընտրական կեղծիքների արդյունք են:

Ռաֆֆի Հովհաննիսյանը «Ժառանություն» կուսակցության ղեկավարն է, ով 2012թ-ին այցելել էր Դի-Այ-Ուայ՝ նույնասեռականների նկատմամբ ընկերական ակումբ այն պայթեցնելուց հետո՝ ի նշան համերաշխության: Դի-Այ-Ուայ ակումբ այցելելուց հետո Ռաֆֆի Հովհաննիսյանը բազմիցս քննադատվել է և՛ քաղաքական գործիչների կողմից, և՛ հասարակության կողմից, փաբ այցելելը նաև մշտապես շահարկվել է թե՛ նախընտրական քարոզարշավի ժամանակ, և թե՛ ընտրություններից հետո: Նախագահական ընտրությունների արդյուքները ամփոփող մի մամլո ասուլիսի ժամանակ իշխող Հանրապետական խմբակցության պատգամավորներ Հայկ Բաբուխանյանն այն մարդկանց, ովքեր ընտրել էին Ռաֆֆի Հովհաննիսյանին, որակեց որպես «գեյ կամ անգիտակից» մարդիկ[5]: Սակայն հետագայում Ռաֆֆի Հովհաննիսյանը իր ելույթներում անդրադարձել է փոքրամասնական խմբերի նկատմամբ հարձակումներին. «ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պաշտպանված է Սահմանադրությամբ»: «Մենք կարիք ունենք սահմանդրական պետության, որտեղ յուրաքանչյուրի իրավունքները պաշտպանված են, և այն մարդիկ, ովքեր կոտնահարեն որևիցե խմբի իրավունքները, լինի դա փոքրամասնություն, թե մեծամասնություն, պատասխան պետք է տան օրենքի առջև»[6]:

Երևանի ավագանու ընտրություններ, 2013

Երևանի ավագանու ընտրությունները տեղի են ունեցել 2013թ-ի մայիսի 5-ին: Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ստացավ ընդհանուր քվեների 56%-ը, Բարգավաճ Հայաստանը՝ 23%-ը, իսկ «Բարև Երևան» դաշինքը՝ 8 %-ը:

Նախընտրական քարոզարշավի ժամանակ ամենաշատ քննարկվող հարցերից մեկը այն էր, թե ինչպես են Երևանի քաղաքապետի թեկնածուները պատրաստվում մաքրել «Կոմայգի» կոչվող այգին սեռական ծառայություններ տրամադրող տրանսվեստիտներից: Քաղաքապետի թեկնածուներից Արմեն Երիցյանը՝ «Օրինաց երկիր» կուսակցությունից, ով նաև Արտակարգ իրավիճակների նախարարն է, հայտարարել

[5] Հայկ Բաբուխանյանը 2013թ-ի նախագահական ընտրությունների արդյունքների մասին http://www.youtube.com/watch?v=Ufjwaj_GnbI

[6] Ռաֆֆի Հովհաննիսյանի հարցազրույցը «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում http://www.youtube.com/watch?v=vtuX9MnyDJI

է, որ պետք է լուսավորել այգին, տեղադրել նկարահանող տեսախցիկներ և ուղիղ եթերով «յութուբ» կայքում հեռարձակել այն ամենը, ինչ կատարվում է այգում»[7]: Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակ թեկնածուներից Մեսրոպ Առաքելյանը՝ «Առաքելություն» կուսակցությունից, հայտարարել է. «Չնայած մեր կուսակցության ազատականությանը, մենք կողմ ենք միասեռականների [նույնասեռականների] քրեականացմանը»[8]:

Դի-Այ-Ուայ ակումբի գործով դատավարություն



Ակումբը հրկիզումից հետո
Լուսանկարը՝ Նաիրի Հախվերդիի

Դի-Այ-Ուայ (DIY) ակումբը պայթեցվել է 2012թ-ի մայիսի 8-ին երիտասարդ անձանց խմբի կողմից, ովքեր հիմնավորում էին իրենց արարքը այն հանգամանքով, որ ակումբի սեփականատեր Արմինե Օգանեզովան (ճանաչված է որպես Ծոմակ) 2011թ-ին մեկնել է Թուրքիա և այնտեղ մասնակցել նույնասեռականների շքերթին, ինչպես նաև նրանով, որ ԼԳԲՏ անձիք հաճախ էին այցելում այդ ակումբ:

Այս երիտասարդների նկատմամբ հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի երրորդ մասով, որն է ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով: Սակայն հարկ է նշել, որ այն ամբողջությամբ չի ներկայացնում հանցագործության էությունը և չի պարունակում ատելության հիմքերը:

Նույն օրը ոստիկանությունը ձերբակալել է հանցագործության մեջ կասկածվող երկու եղբայրներին: Սակայն նրանք հետագայում ազատ են արձակվել ստորագրության և գրավի հիման վրա, որը տրվել էր Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամներ Արծվիկ Մինասյանի և Հրայր Կարապետյանի կողմից: Ակումբի պայթեցումն արդարացվեց Հայաստանի հանրապետական կուսակցության պատգամավորներ Էդուարդ Շարմազանովի, Համլետ Սահակյանի, ինչպես նաև Ռուբեն Հայրապետյանի կողմից, ինչպես նաև Հայ հեղափոխական դաշնակցության անդամներ Վահան Հովհաննիսյանի և Արթուր Աղաբեկյանի կողմից:

Ընդհանուր իրավասության դատարանը Համբիկ և Արամե Խաբազյան եղբայրներին դատապարտեց 1 տարի 7 ամիս պայմանական ազատազրկման՝ սահմանելով 2 տարի փորձաշրջան: Իսկ վերաքննիչ դատարանը նրանց շնորհեց համաներում[9]:

Հայաստանյան իշխանությունները չեն կատարել իրենց պարտավորությունները՝ կանխարգելելու նման հարձակումները, ինչպես նաև հետաքննել և դատապարտել ատելության հիմքով հանցագործությունները, որոնք իրականացվել են ընդդեմ

[7] Արմեն Երիցյանի հարցազրույցը «Կոմայգում» սեռական ծառայություն տրամադրող տրանսվեստիտների մասին http://henaran.am/news_view.php?post_id=21652
[8] Մովսես Առաքելյանը նույնասեռականության քրեականացման մասին http://www.aravot.am/2013/04/18/232630/

Դի-Այ-Ուայ ակումբի սեփականատիրոջ: Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրության բացակայությունը ստեղծել է անպատժելիության մթնոլորտ այս հարձակումներն իրականացնողների շրջանում: Սա հանգեցրեց նրան, որ քրեական գործը հարուցվեց միայն ակումբին տրված վնասի համար՝ առանց նույնիսկ հղում տալու այն փաստին, որի հիմքով իրականացվել էր հարձակումը: Հարձակումների, բռնության, ահաբեկման և սպառնալիքների արդյունքում Արմինե Օգանեզովան ստիպված եղավ հեռանալ Հայաստանից: Ակումբի սեփականատերը ներկայումս ապրում է Շվեդիայում, որտեղ էլ նա պաշտոնապես դիմել է ապաստարան ստանալու համար:

Օգանեզովան պնդում է, որ ոտնահարվել են մի շարք իրավունքներ, որոնք երաշխավորված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով: Մասնավորապես, նա նշում է, որ պետությունը, որպես պատասխանող կողմ, ոտնահարել է խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը (հոդված 3), անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը (հոդված 8), ինչպես նաև արտահայտվելու ազատության իրավունքը (հոդված 10): Լրացուցիչ բողոքներ են ներկայացվել կոնկրետ իրավունքների ոտնահարումների, ազատությունների և անխտրականության արդյունավետ մեխանիզմներ չկիրառելու համար:

Դի-Այ-Ուայ ակումբը Երևանում. մինչ ատելության հիմքով հանցագործությունը և դրանից հետո
Լուսանկարները՝ Օնիկ Քրիքորյանի

Օրենսդրություն

«Քարոզչության օրինագիծ»

2013թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը նախաձեռնել էր «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որտեղ մասնավորապես առաջարկ էր արվել ավելացնել երկու հոդված, որը պատասխանատվություն էր նախատեսում «ոչ ավանդական սեռական հարաբերությունների» քարոզչության համար:

Ինչպես նախատեսված էր նախագծում՝ ոչ ավանդական սեռական հարաբերությունների վերաբերյալ քարոզչությունը առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքա-

[9] DIY-ը պայթեցրած եղբայրների նկատմամբ համաներում կիրառվեց http://goo.gl/MQAznP

ցիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով և իրավաբանական անձի պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով: Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զանգվածային լրատվության միջոցների օգտագործմամբ, առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով և իրավաբանական անձի պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով:

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչությունը հետևյալ փոփոխությունները նախաձեռնել էր՝ հիմնավորելով հայկական ընտանիքների պաշտպանության գործում իրենց բացառիկ դերով: Տվյալ նախագծում առաջարկված փոփոխություններում, սակայն, սահմանված չէին, թե ինչ է նշանակում «ավանդական սեռական հարաբերություններ», «ոչ ավանդական սեռական հարաբերություններ», «քարոզչություն» հասկացությունները: Ավելին, աշխարհիկ և ժողովրդավարական պետությունում, որտեղ խոսքի ազատությունը սահմանված է Սահմանադրությամբ, «քարոզչություն» հասկացությունը չպետք է վերաբերի ոչ վնասակար գործողություններին:

Օգոստոսի 8-ին ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչությունը ետ կանչեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին առաջարկը: Ինչպես նշված էր ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջում, ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը, նկատի ունենալով օրինագծի՝ քննարկումների ընթացքում ի հայտ եկած թերություններն ու բացթողումները, ինչպես նաև նշելով, որ այդ խնդիրն այսօր ոստիկանության առաջնահերթություններից չէ, օրինագիծը հետ է ուղարկել:

Այնուամենայնիվ, օրենքում փոփոխությունների իրականացնելու նախագիծը ոչ թե չեղյալ է համարվել, այլ ընդամենը հետաձգվել է:

«Խտրականության դեմ» օրենքի նախագիծ

2012թ-ի տարեվերջին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը նախաձեռնել էր մշակել «Խտրականության դեմ» ՀՀ օրենք: «Խտրականության դեմ» օրենքի նախնական տարբերակը 2013թ-ին դրվել էր քննարկման առաջարկների և տարբեր տեսանկյուններ ունենալու համար՝ տարբեր սոցիալական խմբերի, համայնքների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլ հետաքրքրված անձանց շրջանում: Այնուամենայնիվ, նախագծի սկզբնական տարբերակում «խտրականությունը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով» ներառված էր, իսկ այնուհետ հանվեց օրենքում խտրականության ընդհանուր ձևակերպումից:

Ներկայումս օրենքի շուրջ քննարկումների և օրենքը տարբեր միջազգային կազմակերպություններին և մարմիններին՝ առաջարկությունների և կարծիքի համար ուղարկելու գործընթացը դադարեցված է և դեռ անհայտ է, թե երբ այն կվերսկսվի:

Զանգվածային լրատվամիջոցներ (ԶԼՄ)

Հայկական ԶԼՄ-ներում ԼԳԲՏ հիմնահարցերի ներկայացման ձևերի մեջ գրեթե չկա բազմակարծություն: Միայն որոշ առցանց թերթերում ԼԳԲՏ հարցերը ներկայացվում են առավել չեզոք և տրամադրում են հավաստի տեղեկատվություն: Նախորդ տարի, ԼԳԲՏ անձիք առավել քիչ են որակվել որոշակի վիրավորական բառերով, և այժմ մեդիայում առավել գործածական է «նույնասեռական» եզրույթը:

ԶԼՄ–ներում նույնասեռական անձանց մասին հրապարակումները հիմնականում մանիպուլյացիոն բնույթ են կրում, տեղեկատվության կեղծման տարբեր ռազմավարություններ են կիրառվում, որպեսզի փոփոխեն ընթերցողների ընկալումը: Հայկական իրականությունում մեդիայի տարբեր աղբյուրներ հաճախ ստեղծում են կեղծ պատմություններ, որոնք վերաբերում են դեռևս տեղի չունեցած որոշակի միջոցառումներին, կամ ԼԳԲՏ անձանց մասնավոր կյանքի մասին են՝ սոցիալական լարվածություն և պառակտում առաջացնելու համար, ինչն էլ իր հերթին ստեղծում է անհանգստության և լարվածության միջավայր շատ ԼԳԲՏ անձանց համար: ԼԳԲՏ-ին առնչվող հոդվածների տակ մեկնաբանությունները շատ հաճախ կրում են վիրավորական և հայհոյական, արժանապատվությունը նսեմացնող բնույթ, ինչպես նաև կարող են պարունակել ուղղակի և ոչ ուղղակի սպառնալիքներ ԼԳԲՏ համայնքի հանդեպ. դրանք գրեթե երբեք չեն խմբագրվում կայքերի ադմինիստրատորների կողմից:

Հեռուստատեսությունը դեռևս մնում է մեդիայի այն միջոցը, որն ամենաշատն է տարածում հոմոֆոբիա, իսկ հեռարձակումները, որոնք առնչվում են ԼԳԲՏ հիմնախնդիրներին, հիմնականում հաստատում են առկա կարծրատիպերն ու նախապաշարմունքները ԼԳԲՏ անձանց և համայնքի մասին:

ԼԳԲՏ անձիք մեդիայում հաճախ դառնում են որոշակի հումորի, ծաղրանքի և վիրավորանքի օբյեկտներ, երբեմն էլ ներկայացվում են որպես հիվանդ կամ մտավոր խանգարումներ ունեցողներ:

2013թ-ի օգոստոսին «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրողներից Լուսինե Բաղալյանն իր վարած հաղորդաշարի հաղորդումներից մեկի ժամանակ համաձայնության եկավ այն մարդկանց հոմոֆոբ հայտարարությունների հետ, ովքեր պարբերաբար ատելություն են տարածում հայկական մեդիայում ԼԳԲՏ անձանց հանդեպ: Նա հրապարակավ հայտարարեց, որ չի համաձայնի, որ հանրակրթական դպրոցում իր երեխայի ուսուցիչը լինի նույնասեռական:

«Կիսաբաց լուսամուտներ» թոք շոուն, որը հեռարձակվում է Ա-Թի-Վի հեռուստաալիքի եթերով, շատ հաճախ օգտագործում է ԼԳԲՏ հարցերի զգայունությունը՝ պատրաստելու և ներկայացնելու սկանդալային շոուներ, որոնց ընթացքում ԼԳԲՏ անձանց ներկայացնում են մեր հասարակության համար որպես ոչ բնական երևույթ: Այս թոք շոուն հատկապես առանձնանում է նրանով, որ այն պարբերաբար տարածում է ատելություն այդ հաղորդումների ընթացքում ԼԳԲՏ անձանց և հատկապես տրանսգենդեր անձանց հանդեպ:

Մեկ այլ հեռուստատեսային հաղորդում՝ «Երևանը», որը հեռարձակվում է Արմենիա Թի-Վի հեռուստաալիքով, գեյերին և «գենդեր» բառը, որը «հակագենդերային» քարոզչության արդյունքում նույնականացվեց «գեյ» հասկացության հետ, շարունակաբար օգտագործվում է որպես հումորի թեմա. գեյ լինելու հանգամանքով անձին ծեծելը և/կամ աշխատանքից հեռացնելը այս հաղորդումներում ներկայացվում է որպես հումոր:

Հեռուստաեթերում հայտի դարձած Նազենի Հովհաննիսյանը, ով ունի բավականին

մեծ լսարան, ավելի վաղ Ֆեյսբուք սոցիալական ցանցում կիսվել է մի տեսանյութով, որը հետագայում դարձավ բազմաթիվ քննարկումների և մեկնաբանությունների առիթ: Տեսանյութը պատրաստված է ծայրահեղական խմբերի կողմից, ովքեր պարբերաբար տարածում են ատելություն ԼԳԲՏ անձանց հանդեպ: Այսնուհետև, իր հեռուստատեսային հաղորդման ընթացքում, որը կոչվում է «Մարդկային գործոն», քննարկվեց նույնասեռականության հարցը, որի ընթացքում էլ վերոնշյալ խմբերի համար «կանաչ լույս» վառվեց՝ տարածելու ատելության կոչեր:

Տարբեր հոմոֆոբ մարդիկ հաճախ հրավիրվում են հեռուստատեսային ծրագրերի և ստանում են հնարավորություն՝ տարածելու ատելություն: Իսկ առավել լայն հասարակությունը հետևում է հենց հեռուստատեսությանը՝ որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր, ինչով էլ պայմանավորված էր ԼԳԲՏ անձանց հանդեպ ագրեսիայի բարձրացումը:

Սփյուռքի ներգրավվածությունը

Սփյուռքի ավելի քան երկու տասնյակ նշանավոր հայեր միացել են Հայաստանում՝ բոլորի համար հավասարության և արդարության ապահովման մասին հայտարարությանը: Նրանց թվում են բանաստեղծ Դիանա Տեր-Հովանեսյանը, կինոռեժիսոր Ատոմ Էգոյանը, դերասան և պրոդյուսեր Արսինե Խանջյանը, երաժիշտ Սերժ Թանկյանը, և լուսանկարիչ Սկաուտ Թուֆանկջյանը: Հայ արտիստների, մտավորականների ու մասնագետների այս խումբն անհարժեշտ համարեց հրապարակել հայտարարություն՝ հաշվի առնելով նույնասեռականության դեմ օրինագիծը, որը առաջարկվել էր Երևանում: «Նույնասեռականության դեմ այս օրինագիծը Հայաստանում խոցելի մարդկանց և ընդդիմադիր ձայների նկատմամբ անհանդուրժողականության մտահոգիչ օրինակ է»,- ասել է հրատարակիչ Վիգեն Գվիկյանը: Գրող Նենսի Ագաբյանն ասել է. «Մտահոգ մարդիկ չպետք է անտարբեր մնան, երբ ԼԳԲՏ մեր բարեկամները թիրախավորվում և պիտակավորվում են»: Հայտարարությունը ներկայացնում է նրանց միահամուռ նվիրվածությունը մարդու իրավունքներին և Հայաստանի քաղաքացիական հասարակության ծնունդ առնող շարժումներին:

Միջազգային կազմակերպությունների արձագանքը

ԼԳԲՏ անձանց դեմ օրենսդրության առաջարկի մասին Հյուման Ռայթս Վոտչ կազմակերպության նամակը ՀՀ նախագահին

Ցանկացած գործողություն, որը կսահմանափակի ԼԳԲՏ անձանց ազատ արտահայտման և միություններ կազմելու ազատությունը՝ հիմնված նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա, կխոսի այն մասին, որ ՀՀ Կառավարության գործողությունները չեն համապատասխանում իր կողմից ստանձնած պարտավորություններին՝ ԼԳԲՏ անձանց հանդեպ հանդուրժողականություն խթանելուն և ցանկացած տեսակի խտրականության բացառմանը: Դրանով նրանք նաև թույլ են տալիս հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի տարածմանը, ինչն էլ նպաստում է ատելության և բռնության մշակույթի տարածմանը[10]:

Ամնեսթի Ինթերնեշնլը զեկուցում է Հայաստանում ԼԳԲՏ համայնքի անդամների նկատմամբ համատարած հետապնդումների մշակույթի մասին: Հայաստանում Ամնեսթի Ինթերնեշնլի հետազոտող Նատալիա Նոծաձեն ասել է. «Այդպիսի հարձակումների արժանացածները հաճախ մնում են առանց համապատասխան պաշտպանության և նրանց նկատմամբ իրագործած հանցանքները չեն պատժվում, ինչը բացասաբար է ազդում ուրիշների վրա»: «Արդյունքում լրագրողներն ու մարդու իրավունքների պաշտպանները հաճախ ինքնագրաքննություն են անում վիճելի հարցերի շուրջ, ինչը հետագայում Հայաստանի հասարակությունում պատճառ է դառնում կարծիքների բազմազանության տարածքի փոքրացմանը»: ԼԳԲՏ անձանց համար չկա նախատեսված իրավական պաշտպանություն Հայաստանում[11]:

Մարդու իրավունքների պաշտպան

2013թ-ի հոկտեմբերի 11-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը հանդես եկավ հայտարարությամբ. «Կոմայգու այլասերվածությունը վերացնելը անհրաժեշտ է. հնարավոր է. եվրոպական է: Նման այլասերվածությունը անհրաժեշտ է վերացնել, քանի որ այն ոչ միայն անբարոյական է, այլև անօրինական»: Նա հաստատել է նաև իր հայտարարությունը հոկտեմբերի 31-ին՝ լրագրողների հետ հարցազրույցի ժամանակ. «Կոմայգում այլասերվածության վերացումը հնարավոր է, եթե Երևանի քաղաքապետարանը ցանկապատի այգին և փակի այգու մուտքը գիշերային ժամերին»[12]:

«Գենդերային հավասարության» օրենք

2013թ-ի մայիսին ՀՀ Ազգային Ժողովը ընդունեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքը: Օրենքի ընդունումից երկու ամսի հետո, օրենքի ընդունումը դարձավ բուռն քննարկումների թեմա: Ավելին, այս քննարկումներն ավելի թեժացան և սրվեցին օգոստոսի վերջին երկու շաբաթների ընթացքում, երբ հայկական հասարակության բոլոր ոլորտները ներգրավված էին քննարկումների մեջ՝ ներառյալ քաղաքացիական հասարակության խմբերը, եկեղեցին, ազգայնակաները, պահպանողականները, պետական ներկայացուցիչները, տարբեր ՀԿ-ներ, իրավապաշտպաններ, բլոգերներ, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, փոփաստղեր, ինչպես նաև քաղաքական կուսակցություններ: Այս հիստերիայի հիմնական թիրախը, համենայն դեպս այդպիսին էր սկզբում, օրենքի երրորդ հոդվածն էր, որտեղ «գենդեր» բառը սահմանված էր որպես «տարբեր սեռե-

Ծայրահեղական խմբերը և Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչները բողոքում են ընդդեմ գենդերային հավասարության Լուսանկարը՝ Նարեկ Ալեքսանյանի / Hetq.am

[10] Հյուման Ռայթս Վոտչի նամակը ՀՀ նախագահ Ս. Սարգսյանին (նամակ՝ անգլերեն) http://www.hrw.org/news/2013/10/18/letter-armenian-president-regarding-proposal-anti-lgbt-legislation
[11] «Հայաստան. չկան տարբերություններ» Ամնեսթի Ինթերնեշնլի զեկույցն ամբողջությամբ (անգլերեն) http://amnesty.org/en/library/asset/EUR54/002/2013/en/6d6a852f-6494-4ef5-bc13-1373f154e0de/eur540022013en.pdf
[12] Կոմայգու այլասերվածությունը վերացնելը անհրաժեշտ է. Օմբուդսմեն http://hartak.am/arm/index.php?id=8110

րի ձեռքբերովի սոցիալական վարք». էապես, գենդեր հասկացության սահմանումը ոչ միայն սխալ էր մեկնաբանվել, այլև ընդհանրապես չէր հասկացվել: Միտումնավոր աղավաղվեց հասկացության էությունը և նրան առնչվող այլ թեմաներ, ինչպիսին էր նաև ԼԳԲՏ հարցերը, ինչն էլ դարձավ ամենաշատ քննարկվող թեման Հայաստանում:

Օրինագիծը, որը շարունակում է նախորդ և ներկայիս կառավարական ջանքերը՝ խթանելու երկրում գենդերային հավասարություն, կրոնական և պահպանողական առաջնորդները որակեցին որպես հակահայկական, «ոչ ավանդական» կամ առհասարակ՝ անբարոյական: Բանավեճը շատ արագորեն տարածվեց հեռուստատեսային և առցանց մեդիայում, իսկ «գենդեր» բառը դարձավ հոմանիշ տրանսգենդերին, նույնասեռականությանը, նաև այլասերվածությանը՝ սփռելով բարկություն հասարակության մեջ: Կանանց իրավունքների և ԼԳԲՏ իրավունքների պաշտպանները և կազմակերպություններն էլ որակվեցին որպես «ազգային վտանգ», «ընտանիք քանդողներ», ինչպես նաև «հայկական արժեքների համար վտանգ»: Ծայրահեղական խմբերը սկսեցին ապատեղեկատվության տարածումը տարբեր սոցիալական ցանցերում՝ թիրախավորելով կանանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին և գենդերային հավասարության ջատագովներին:

Այն առավել վտանգավոր և սպառնացող դարձավ, երբ ազգայնականները, այդ թվում նաև կղերականներն ու կրոնավորները, սկսեցին առավել ակտիվորեն տարածել ատելություն պարունակող կոչեր՝ հորդորելով հանրությանը վառել, հարձակվել մարդկանց վրա: Մասնավորապես, այդ խմբի անդամներից մեկը առաջարկել էր «պայթացնել Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ-ի գրասենյակն այնպես, ինչպես պայթեցվել է Դի-Այ-Ռեայ ակումբը»[13]: Դեռ ավելին, նրանք հարձակվում են և տարածում ապատեղեկատվություն, ատելություն և անհանդուրժողականություն մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կազմակերպությունների, իրավապաշտպան-ների, ակտիվիստների և հետազոտողների վերաբերյալ, ովքեր զբաղվում են գենդերային հիմնահարցերով և պայքարում են գենդերային հիմքով խտրականության, գենդերային անհավասարության, ինչպես նաև գենդերային խտրականության դեմ[14]:

Չնայած օրենքի դեմ հակահարվածը սկսվեց գրեթե անմիջապես օրենքի ընդունումից հետո, սակայն, այն ավելի ուժեղացավ այն բանից հետո, երբ նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի սկզբին հայտարերեց, որ Հայաստանը պատրաստ է անդամակցել Կրեմլի վարած Մաքսային միությանը: «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասին» օրենքի շուրջ հիստերիան արհեստականորեն ավելի լայնամասշտաբ դարձավ՝ պաշտպանելու Ռուսաստանի կողմից ստեղծված Մաքսային միությանն անդամակցելու պաշտոնական Երևանի որոշումը և հակադարձելու Եվրոպական միության հետ բանակցությունների ընթացքը[15]:

Սեպտեմբերի 9-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ Տեր Կոմիտաս վարդապետ Հովնանյանը, ով Հայ առաքելական եկեղեցու անդամ է, զգուշացրել է, որ «նոր կրոնական շարժում է սկսում ձևավորվել, որը տարածում է նույնասեռականություն, մանկա-

[13] Գենդերային հավասարության մասին օրենքի պատճառով ՀԿ-ներին սպառնում են «տրաքացնել» http://goo.gl/ztWRBF

[14] Հիստերիա «Գենդերային հավասարության օրենքի» շուրջ (անգլերեն) http://www.armenianweekly.com/2013/09/20/the-gender-equality-law-hysteria-in-armenia/

[15] Հակաեվրոպական քարոզչությո՞ւն, թե՞ «գենդերի» դեմ պայքար http://www.aravot.am/2013/12/25/418278/

պղծություն, արյունապղծություն (ինցեստ) և այլ անբորայական բաներ: Բոլորը պետք է մտահոգված լինեն սրանով: Եթե մենք հայեր ենք, մենք պետք է քայլեր ձեռնարկենք՝ կանխարգելելու այս անկումային երևույթները»[16]:

Տրանսֆոբիա

2013թ-ի նոյեմբերի վերջին Հայաստանի որոշ երիտասարդ խմբավորումներ կազմակերպել էին ստորագրահավաք, որը ներկայացրեցին քաղաքապետարան՝ կոչ անելով տեղական ինքնակառավարման մարմիններին իրականացնել կոնկրետ գործողություններ՝ արմատախիլ անելու մարմնավաճառությունը Կոմայգում, որը հայտնի է որպես սեռական ծառայություն տրամադրող տրանսվեստիտների հավաքատեղի: Մոտ 3000 ստորագրություն էր հավաքվել այգում իրականացված ակցիայի ընթացքում և կազմակերպիչները սպասում են քաղաքապետ Տարոն Մարգարյանի արձագանքին: Կոմայգում մարմնավաճառության հիմնախնդիրը ժամանակ առ ժամանակ հանրային քննարկումների գագաթնակետին է հասնում սոցիալական ցանցերում[17]:

Ավելի ուշ, նոյեմբեր ամսին, ծայրահեղական խմբերի անդամներից մեկը, ով մինչ այդ առաջարկել էր «պայթեցնել Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ-ի գրասենյակը», և ում չի կարողացել գտնել ոստիկանությունը, սկսեց օնլայն ստորագրահավաք՝ կոչ անելով ՀՀ Կառավարությանը, ՀՀ մշակույթի նախարարությանը, ինչպես նաև ՀՀ հանրային հեռուստառադիո հեռարձակողների խորհրդին չեղյալ հայտարարել Հայաստանի մասնակցությունը Եվրատեսիլ 2014 երաժշտական մրցույթին, քանի որ տրանսգենդեր Կոնչիտա Վուրստը պետք է ներկայացնի Ավստրիան միևնույն մրցույթում[18]:

2013թ-ի դեկտեմբեր ամսին տեղի ունեցավ ֆոտոլրագրող Նազիկ Արմենակյանի ցուցահանդեսը և գրքի շնորհանդեսը, որը պատմում էր Երևանում սեռական ծառայություն տրամադրող տրասնգենդեր և տրանսվեստիտ անձանց մասին. այն հետագայում դարձավ հայկական մամուլի, ինչպես նաև սոցիալական ցանցերում տարբեր բանավեճերի առարկա: «Մենակության շտամպը»[19] գիրքն ու մուլտիմեդիան առաջին ծրագիրն էր՝ իրականացված Հայաստանում, որը ներկայացնում է Հայաստանում ապրող տրանսգենդեր անձանց հիմնախնդիրները: Չնայած այն հանգամանքին, որ միջոցառումը հանրային բնույթ չէր կրում (միայն հրավիրված մարդիկ կարող էին մասնակցել), այն չէր կարող աննկատ մնալ Հայաստանում, իսկ հեղինակը սոցիալական մեդիայում պարբերաբար ենթարկվում էր հոգեբանական ճնշումների:

[16] Պայքարն ընդդեմ գենդերային հավասարության դառնում է ԵՄ-ի դեմ պայքարին (անգլերեն) http://www.eurasianet.org/node/67620
[17] Ստորագրահավաք «Կոմայգին» տրանսվեստիտ մարմնավաճառներից մաքրելու նպատակով http://www.emedia.am/?p=48116/storagrahavag+e+kazmakerpvel+komaygin+transvestit+marmnavacharneric+magrelu+npatakov
[18] Ստորագրահավաքի տեքստը՝ http://goo.gl/ugMSvr
[19] «Մենակության շտամպը» շնորհանդես http://civilnet.am/nazik-armenakyan-the-stamp-of-loneliness/

«Պայքար Եվրոպայում խտրականության, այլատյացության և անհանդուրժողականության դեմ» միջազգային խորհրդաժողով

Լուսանկարը՝ Նարեկ Ալեքսանյանի / Hetq.am

Հոկտեմբերի 21-ին մի խումբ խաղաղ ցուցարարներ իրենց բողոքի ձայնն էին բարձացրել Երևանում այդ օրերին իրականացվող «Պայքար Եվրոպայում խտրականության, այլատյացության և անհանդուրժողականության դեմ» միջազգային խորհրդաժողովի շուրջ: Ցուցարարները բողոքում էին Հայաստանում նացիոնալիզմի, ռասիզմի և անհանդուրժողականության դեմ: Ցուցարարները սկզբում իրենց բողոքն արտահայտում էին Արմենիա Մարիոթ հյուրանոցի առջև, իսկ այնուհետև ներս մտան դահլիճ, որտեղ էլ անցկացվում էր խորհրդաժողովը՝ մատնանշելով ՀՀ իշխանությունների կեղծավորությունը, ովքեր և կազմակերպել էին այդ խորհրդաժողովը: Ակտիվիստները կոչ արեցին ՀՀ իշխանություններին իրականացնել կոնկրետ գործողություններ Դի-Այ-Ուայ՝ նույնասեռականների նկատմամբ բարեհաճ ակումբի պայթեցման, կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների նկատմամբ սպառնալիքների հետ կապված, ինչպես նաև վերացնելու խտրականությունը, որն ուղղված է ԼԳԲՏ համայնքի դեմ[20]:

Ծիածանի դրոշը

Դեկտեմբերի 2-ին հարյուրավոր ցուցարարներ երթ անցկացրեցին Երևանի կենտրոնական փողոցներում՝ դատապարտելու իշխող ռեժիմը, Պուտինի այցը Հայաստան, ինչպես նաև Մաքսային միությանը միանալու նախագահ Սերժ Սարգսյանի որոշումը:

Հայաստանի և այլ դրոշների հետ մեկտեղ, Ծիածանի դրոշը ևս ծածանվեց այդ օրն իրականացված ցույցի ժամանակ: Սակայն ցույցի ընթացքում Ծիածանի դրոշը բռնող ակտիվիստները և նրանց ընկերները ենթարկվել են հարձակման, և որոշ ազգայնական խմբավորումների ներկայացուցիչներ սպառնացել են նրանց: Այս խմբի անդամները նույն մարդիկ էին, ովքեր նաև հարձակվել էին «Բազմազանության» երթի վրա 2012թ-ի մայիսին, ինչպես նաև խափանել «Պարադա» գեյ-թեմատիկ ֆիլմի ցուցադրությունը Երևանում: Ցույցից հետո ակտիվիտները հետապնդվել են ոստիկանների կողմից և ծերբակալվել. նրանց մի քանի ժամ ոստիկանական բաժանմունքում են պահել՝ առանց մեկնաբանության:

2013թ. դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների միջազգային օրը, Ծիածանի դրոշը, անարխիստների և այլ դրոշների հետ, երկրորդ անգամ բարձրացվեց երթի ժամանակ: Համաձայն ակտիվիստների և մի շարք բլոգերների՝ այս իրադարձություններն անսպասելի էին Հայաստանում: Երկրորդ երթի ժամանակ, ի տարբերություն առաջինի, միայն մեկ փոքրիկ քննարկում եղավ այդ կապակցությամբ, որը սակայն, չշարունակվեց՝ չնայած այն հանգամանքին, որ դիմացինը համազգեստով վետերան կին էր, ով ուներ ինչպես կողմնակիցներ, այնպես էլ ընդդիմախոսներ Լալա Ասլիկյանի հետ զրույցում, երբ վերջինս այդ պահին բռնել էր դրոշը:

[20] Ակտիվիստները խափանել են Երևանում անցկացվող խտրականության, այլատյացության և անհանդուրժողականության դեմ խորհրդաժողովի մեկնարկը http://www.epress.am/2013/10/21/241649.html
[21] Երիտասարդությունը թող սեռական փոքրամասնությունների դեմ պայքարի, ոչ թե տրանսպորտի ուղեվարձի թանկացման http://news.am/arm/news/182244.html

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, ԼԳԲՏ անձիք Հայաստանում հանդիպում են խտրականության իրենց սոցիալական և տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում և խոցելի են վերբալ և ֆիզիկական հարձակումների տեսանկյունից, որոնք էլ հիմնականում մնում են անտեսանելի՝ վախի և բացասական հետևանքների պատճառով: ԼԳԲՏ հանրույթը շարունակում է զգալ խտրականություն զբաղվածության ոլորտում, խոչընդոտներ առողջապահության ոլորտում, ֆիզիկական և հոգեբանական բռնություն բանակում, հասարակության մեջ, ինչպես նաև ընտանիքում: Ավելին, 2013թ-ի ընթացքում Հայաստանը հետընթաց է ապրել, քանի որ անհանդուրժողական տեսակետները հաճախակի են բարձրաձայնվել, և առավել գերակշռել գենդերային հավասարության շուրջ ձևավորված համազգային բանավեճի ընթացքում: Պետական պաշտոնյաները աչք են փակում ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացված բռնի արարքներին՝ բնութագրելով բռնությունը որպես «ազգային արժեքների» պաշտպանություն:

> *«Հայ երիտասարությունը ժողովրդին ավելի մեծ օգուտ կտա, եթե պայքարի ոչ թե տրանսպորտի ուղեվարձի թանկացման, այլ սեռական փոքրամասնությունների դեմ».*[21]
>
> – Գալուստ Սահակյան, Հայաստանի Հանրապետական կուսակցության փոխնախագահ, ՀՀԿ խմբակցության ղեկավար

Լուսանկարը՝ Սեդա Գրիգորյանի / CivilNet.am

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ

էլ-փոստ՝ info@pinkarmenia.org
հեռ.՝ +374 60 377277

www.pinkarmenia.org